

Պ-187՝-20.11.2017,12.01.2018-SՀ-011/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՎԻՃԱԿԱԽԱՂԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1.

1. «Վիճակախաղերի մասին» Հայաստանի Հանրապետության 2003 թվականի դեկտեմբերի 17-ի ՀՕ-3-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 5-րդ հոդվածի 5-րդ մասն՝ «անձինք» բառից հետո լրացնել «, բացառությամբ տոտալիզատորի, որին մասնակցելու իրավունք ունեն միայն 21 տարեկանը լրացած անձինք»:

Հոդված 2.

Օրենքի 14-րդ հոդվածի՝

1) 2-րդ մասի «ը» կետի «5-րդ, 6-րդ կամ 7-րդ մասերով» բառերը փոխարինել «6-րդ կամ 7-րդ մասերով» բառերով,

2) 2-րդ մասը լրացնել նոր՝ «թ» կետով.

«թ) խախտել է սույն օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված պահանջը՝ առաջին անգամ՝ խախտման յուրաքանչյուր դեպքի համար՝ երկու միլիոն դրամ, առաջին անգամ խախտումը հայտնաբերելու օրվանից երկու տարվա ընթացքում երկրորդ անգամ՝ խախտման յուրաքանչյուր դեպքի համար՝ հինգ միլիոն դրամ, իսկ առաջին անգամ խախտումը հայտնաբերելու օրվանից երկու տարվա ընթացքում երրորդ և յուրաքանչյուր հաջորդող անգամ՝ խախտման յուրաքանչյուր դեպքի համար՝ տասը միլիոն դրամ:»,

3) 3-րդ մասի «նույն մասի «ա» եւ «ը» կետերում» բառերը փոխարինել «նույն մասի «ա», «ը» եւ «թ» կետերում» բառերով:

Հոդված 3.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2018 թվականի ապրիլի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՎԻՃԱԿԱՆԱՂԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1.

1. «Վիճակախաղերի մասին» Հայաստանի Հանրապետության 2003 թվականի դեկտեմբերի 17-ի ՀՕ-3-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 5-րդ հոդվածի 5-րդ մասին «անձինք» բառից հետո լրացնել «բացառությամբ տոտալիզատորի, որին մասնակցելու իրավունք ունեն միայն 21 տարեկանը լրացած անձինք»~~«18» թիվը փոխարինել «21» թվով:~~

Հոդված 2.

Օրենքի 14-րդ հոդվածի՝

1) 2-րդ մասի «ը» կետի «5-րդ, 6-րդ կամ 7-րդ մասերով» բառերը փոխարինել «6-րդ կամ 7-րդ մասերով» բառերով,

2) 2-րդ մասը լրացնել նոր՝ «թ» կետով.

«թ) խախտել է սույն օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված պահանջը՝ առաջին անգամ՝ խախտման յուրաքանչյուր դեպքի համար՝ երկու միլիոն դրամ, առաջին անգամ խախտումը հայտնաբերելու օրվանից երկու տարվա ընթացքում երկրորդ անգամ՝ խախտման յուրաքանչյուր դեպքի համար՝ հինգ միլիոն դրամ, իսկ առաջին անգամ խախտումը հայտնաբերելու օրվանից երկու տարվա ընթացքում երրորդ և յուրաքանչյուր հաջորդող անգամ՝ խախտման յուրաքանչյուր դեպքի համար՝ տասը միլիոն դրամխախտման առաջին դեպքի համար՝ երկու միլիոն դրամ, խախտման երկրորդ դեպքի համար՝ հինգ միլիոն դրամ, իսկ խախտման երրորդ դեպքի համար՝ տասը միլիոն դրամ:»,

3) 3-րդ մասի «նույն մասի «ա» եւ «ը» կետերում» բառերը փոխարինել «նույն մասի «ա», «ը» եւ «թ» կետերում» բառերով:

Հոդված 3.

1. Օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասը «գ» կետից հետո լրացնել նոր՝ «գ1» կետով.

«գ1) եթե կազմակերպիչը չորրորդ անգամ խախտել է սույն օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված պահանջը.»»:

Հոդված 43.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում: 2018 թվականի ապրիլի 1-ից: պաշտոնական
հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

**«Վիճակախաղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»
ՀՀ օրենքի նախագծի (Պ-187¹-20.11.2017,12.01.2018-SՀ-011/1) վերաբերյալ**

	Առաջարկության փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ Հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5	6
1.	ԱԺ պատգամավորներ Ս. Ֆարմանյան, Վ. Հարությունյան	Նախագծի 1-ին հոդվածի, 1-ին մաս	Առաջարկում ենք Նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասում ««18» թիվը փոխարինել «21» թվով:» բառերի փոխարեն նշել ««անձինք» բառից հետո «, բացառությամբ տոտալիզատորի, որին մասնակցելու իրավունք ունեն միայն 21 տարեկանը լրացած անձինք.» բառերով»»:	Ընդունվել է:	Ընդունվել է:
2.	ՀՀ կառավարություն, ԱԺ պատգամավոր Ս. Ֆարմանյան	Նախագծի 2-րդ հոդվածի, մաս, 2-րդ	Առաջարկում ենք Նախագծի համապատասխան հոդվածը խմբագրել՝ նախատեսելով, որ լիազոր	Ընդունվել է:	Ընդունվել է:

		3-րդ հոդված	մարմինը լիցենզիայի գործողությունը չդադարեցնի, եթե վիճակախաղերի կազմակերպիչը չորրորդ անգամ խախտել է Օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված պահանջը, այլ շարունակի կիրառել 10.0 մլն. դրամի տուգանք, ինչպես նաև հստակեցնել «յուրաքանչյուր դեպք» հասկացությունը: Հաշվի առնելով վերը նշվածը առաջարկում ենք. 1. Նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ մասում «խախտման առաջին դեպքի համար՝ երկու միլիոն դրամ, խախտման երկրորդ դեպքի համար՝ հինգ միլիոն դրամ, իսկ խախտման երրորդ դեպքի համար՝ տասը միլիոն դրամ» բառերը փոխարինել «առաջին անգամ՝ խախտման յուրաքանչյուր		
--	--	--------------------	--	--	--

			դեպքի համար՝ երկու միլիոն դրամ, առաջին անգամ խախտումը հայտնաբերելու օրվանից երկու տարվա ընթացքում երկրորդ անգամ՝ խախտման յուրաքանչյուր դեպքի համար՝ հինգ միլիոն դրամ, իսկ առաջին անգամ խախտումը հայտնաբերելու օրվանից երկու տարվա ընթացքում երրորդ և յուրաքանչյուր հաջորդող անգամ՝ խախտման յուրաքանչյուր դեպքի համար՝ տասը միլիոն դրամ:»բառերով: 2. Նախագծից հանել 3-րդ հոդվածը (ճանաչել ուժը կորցրած):		
3.	Աժ պատգամավոր Ս. Ֆարմանյան	Նախագծի հոդված 4-րդ	Նախագծի 4-րդ հոդվածի «պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը» բառերը փոխարինել «2018 թվականի	Ընդունվել է:	Ընդունվել է:

			ապրիլի 1-ից» բառերով:		
--	--	--	-----------------------	--	--